

ԵԳԻՊՏՈՍ  
Ղր.՝  
ՏԱՐԵԿԱՆ... 45  
ՎԵՑԱՄՍԵԱՑ 25

ԲԱԺՆԵԳԻՆՇ  
ԿԱՆԻԿ Է



# ՓԻԻՆՆԻԿ

ԱՐՏԱՍԱՅՄԱՆ  
Ֆր.  
ՏԱՐԵԿԱՆ... 15  
ՎԵՑԱՄՍԵԱՑ 8

ԿՈՎԿԱՍ  
ՏԱՐԵԿԱՆ ԲԱՂ. 6



ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

## ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՉԵՌՔԷ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՄԷԿ ԴՐՈՒՇ ՈՂՁ

Բ. ՏԱՄԻ

22 ՅՈՒՆԻՍ 1901

ԹԻԻ 3

### ԻՆՉ ԿՄՊԱՍԵՆՔ ՄԵՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԷՆ

Հինգ դար կայ օր կորուսած ենք մեր քաղաքական անկախութիւնն ու գերութիւնը ժառանգած ենք մեր իրերասպան ու կրօնամոլ նախնիքներէն։ Պատմութիւնը հո՛ն է, հաստատելու համար թէ՛ մեր տոտնին անդադրում կրիւններն եզրած են յաճախ մեր ազգաներուն ազբիւրները։ Մեր առաջնորդները, թագաւոր, կաթողիկոս, իշխան, եպիսկոպոս, նախարար, քահանայ, զօրապետ ու ցեղապետ. ահա՛ մեր ցեղին ու փառքին ուտիճները։ Դրսի, դրացի թշնամիներն այնքա՛ն աւելի յաճախակի յարձակած են մեր սահմաններուն վրայ, որքան նուազ ուժղին ընդդիմութիւններ դտած են իրենց դէմ։ Դարերով գող ու սարսափ սփռող այն ուժը, ա՛յնքան պատկառելի ու ա՛յնքան հաճելի, շուտով պիտի փճանար

ներարկումովը հայութեան երակներուն մէջ, որմէ առաջ եկաւ ազգային լքում ու զզուանք ամեն բանէ որ աշխարհ կը բուրէր, ունենար նոյն իսկ քաղաքական նշանակութիւն. սակայն բան մը կար, որ կը սաւառնէր այդ համատարած աւերածին ու ազատութեան հողակոյտին վրայ. հաւատն էր անի, քրիստոնէական հաւատը, որ բոլոր հայ սրտերուն մէջ վառ կը մնար տակաւին. քանդուած էին պալատներն ու բերդերը, բայց պետ կանգուն կը մնային վանքերը, ուր քաշուած մենակեացները, լեռան մ'ստորոտը, բլուրի մը դապաթը կամ ձորի մը ծոցը, կը հսկէին պահապան հրեշտակի մը պէս, կը սաղմոսէին ու կ'ողբային հայրենի մեռած փառքն ու մեծութիւնը. . . .

Այս հարեանցի ակնարկն քրինք մեր ազգային անցեալին վրայ, մեր ընթերցողներուն յիշեցնելու համար թէ՛ կրօնական ազգ մ'եղած ենք մենք, ազատութեան ինչպէս գերութեան չորջաններուն. ազգ, եկեղեցի, երկու ի-

երբ հալածանքը մղած է մեզ գաղթելու։ Այն ատեն է որ տուն տեղ, հայրենիք, ամեն բան մեր հալածիչներուն թողած, փախած, ապաստանած ենք հեռաւոր երկիրներ. սակայն չենք մոռցած հետերնիս տանելու մեր ամենասուրբ նշխարները, հայրենի աւանդները. կրօն, լեզու, պատմութիւն ինչ որ կը կազմէ ամբողջ ազգութիւն, մը։ Ու այդ աւանդները պէտք էր պահել սուրբ ու անեղծ. ուստի պէտք էր վստահելի աւանդապահ մը. ահա՛ հոս կ'սկսի հայ եկեղեցականին դերը։

Մայր-Հայրենիք թէ Արտասահման, գէպքերուն ուժովն ու կայսութեան պահանջումովը կոչուած է անի, հայ եկեղեցականը, վարելու, առաջնորդելու, հովուելու իր հօտը, որուն գոյութեանը պահպանութեան, զարգացման ու բարգաւաճման հոգն ինք ստանձնած է, ինք, ազգային անյեղի ու յաւէտ յարգելի օրէնքներուն անվրթար պահպանման ու ճշգրիտ գործադրութեան Հսկողը, Առաջնորդը։

Ուրեմն տեղն է հոս կրկնելու թէ՛ Առաջնորդը նախախնամութիւնն է ազգի մը, որ՝ տէր չ'ունի, որ ինկած է, ցիր ու ցան, թափառական ու թշուառ. ազգ մը, որ միջավայրին աւելի յուսալքան թէ բարի ազդեցութիւններն ընդօրինակելու մէջ ընդհանրապէս ճարպիկ է ու չափազանցօրէն ճկուն, քաղաքակրթութեան դիւրամէտ, աւելի օտարներու քան թէ իրեններուն օտակար ցեղ մը։

Միջավայրին փնտսակար ազդեցութեան տակ, տարուէ տարի կը նուազի թիւը սրտով, գլխով ու խառնուածքով հայ դաղուլթի անդամներուն, եգիպտոս ըլլա՛յ թէ Պուլկարիա, Հնդկաստան թէ Եւրոպա, Ովկիանիա՝ թէ Ամերիկայ, ամեն տեղ նոյն իրականութիւնը։ Ու երևոյթը, արտաքինը չլացուցիչ այդ կեդրոններուն մէջ Հայերը դիւրա կ'ուրանան իրենց առանձնայատուկ ձիրքերը, որդեգրելու համար օտարուսի, ամօթաւի մարտիկներէ։

ամեն ինչ որ հրապուրիչ է ու զգլխիչ, չ'պակտիր այդ կեդրոններուն մէջ, ուր դունդազունդ կը դիմէ հայ երիտասարդութիւնը. ու այսպէս, այդ կեդրոնները կ'ըլլան դերեզմաններ ազգային ընտիր ընտիր տաղանդներու, կորովներու, յայտերու և ըղձանքներու։ Ներկայ սերունդը բռնած է այդ կորուստի ուղին, ու կը վազէ դահավէժ գլորելու անդունդը, մինչև որ օտարանայ, անհետանայ, ջնջուի անունը մեր ազգային կեանքի ցանկէն։ Իսկ մատաղ սերունդը՝, մեր յոյսը՝, մեր ապագան. մի՛ հարցնէք, ասոնց դրութիւնն ահուելի է ու անհունապէս ողբալի. տարրականը, անհրաժեշտը, էականը, ազգային դաստիարակութիւնը մէկդի թողուած, կ'աւանդուի անոնց ինչ որ պէտք չէ աւանդուի։ «Այս երկու սերունդներուն ալ ապրելու եղանակներն ու տրուած կրթութիւնը բոլորովին խոտոր կը համեմատին մեր կենսական պահանջներուն հետ։

Արդ, այս դժբաղդ իրականութեան ինչ դարման խորհած են կամ կը խորհին մեր պետերը, վարիչները, առաջնորդները հոս Եգիպտոսի մէջ։

Անտարակոյս, ինչպէս որ վերել յիշեցինք, նախախնամական է դերը, զոր կատարելու կոչուած է առաջնորդը. նա՛ է վարիչը, գործադիրը, վերջապէս, միակ պատասխանատու պետը, որմէ իրաւունք ունինք մենք, ժողովուրդ. սպասելու անթիւ բարիքներ։

Իրմէ՛ կ'սպասենք որ չ'վիրաւորելու համար ժողովուրդին ինքնասիրութիւնն ու արդիւնաւորելու համար իր իշխանութիւնը, սահմանադրութեան ճշգրիտ գործադրութիւնն ապահովէ այս սքանչելի երկրին մէջ, ու այսպէս, վերահաստատէ խանդարուած ներդաշնակութիւնը վարչական մարմիններուն միջև, պաշտօնի վրայ ելողներուն կամ չ'եղողներուն։

Իրմէ՛ կ'սպասենք որ եկեղեցական կալուածներուն — որոնք կրնան անհատի

ձեռք առնէ, անկեղծ ու ձեռնհաս վարչութեան մը գործակցութեամբ:

Իրմէ՛ կ'սպասենք որ տեղական շատ մը ազգամիաս սովորոյթները կամ համոզումները քիչ առ քիչ ջնջել տայ, բնիկներուն ու եկերուն միջև ամրացնէ եղբայրակցութեան կապն ու ցեղային խնամութիւնը, որպէս զի բնիկները վերջապէս համոզուին թէ՛ վերջէն եկողներն ալ իրենց հաւասար իրաւունքներ կը վայելեն կառավարութեան օրէնքներուն առջև, եւ թէ՛ թուրքիոյ մէջ բռնաբարուած Սահմանադրութիւնը՝ պիտի կրնայ իրական բարիքներ ու օգուտներ արտադրել, եթէ կէտ առ կէտ ՚ի գործ դրուի հոս, մեր ազգային բոլոր հաստատութեանց մէջ:

Իրմէ՛ կ'սպասենք որ, առանց նկատի առնելու այս ու այն տիտղոսաւորին Եւրոպայէն վերադարձի առարկութիւնները, — որոնցհետ երբէք առնչութիւն չ'ունի իր բարձր ու փափուկ պաշտօնին կիրառութիւնը, — չ'օրաձգէ բարձումը շարք մ'անկարգութեանց, որոնց շարունակութիւնը կրնայ վտանգել հանրային շահերը:

Իրմէ՛ կ'սպասենք որ առանց ազդուելու անհատական հրահանգներէ կամ ամիրայական պատգամներէ, Գահիրէի ու Աղեքսանդրիոյ վարչական ժողովներուն կազմակերպութեան ու փոխադարձ յարաբերութեանց բնութիւնը ճշդէ, ժողովուրդին ընտրողի հեղինակութիւնը միշտ յարգելով:

Իրմէ՛ կ'սպասենք որ Ս. Եգիպտոսին մաքրէ կղեր լուծայափոխներէ, որոնք իրենց քսակն ու փորը պաշարտացնելու նպատակով միայն առած են սքեմը, և որոնց համար անիմաստ բառեր են հաւատք, ազգ, լեզու, հայրենիք:

Իրմէ՛ կ'սպասենք որ վարժարանները բարեկարգէ, վերջ դնէ մեր մատուցած սերունդին ատենէ մ'ի վեր կրած բարոյական ու մտաւորական զրկումներուն, առողջարար ու սնուցիկ դաստիարակութեան մը հիւթերը ներարկէ հալածական ազդի մ'այդ կրթական

հաստատութեանց մէջ, ուր պիտի պատրաստուի ապագայ հայութեան կարևոր տարրերէն մէկը:

Իրմէ՛ կ'սպասենք որ քաջալերէ բոլոր այն ընկերութիւնները, որոնք կազմուած են ու դեռ կը կազմուին, աղքատները հոգալու, հիւանդները դարմանելու, որբերը խնամելու եւ դաստիարակելու, անուս երիտասարդութիւնը զարգացնելու, բարքերն ազնուացնելու, տեղույս հայ գաղութին բարոյական ու մտաւորական մակարդակը բարձրացնելու նպատակով:

Վերջապէս, իրմէ՛ կ'սպասենք որ Եգիպտոսի գիւղերն ու Սուտանի խորերն ապրող մաս մ'ազգայինները չը մոռնայ, իր մասնաւոր հոգածութեան առարկայ ընելով անոնց կրօնային ու կրթական պէտքերուն մատակարարութիւնը:

Թուելէ յետոյ մեր բոլոր սպասածները, չը մոռնանք ընդունելու թէ՛ Առաջնորդի մ'ինքնուրոյն ճիգերովն ու բարի կամեցողութեամբը չէ՛ որ պիտի իրագործուին ժողովուրդին իղձերն ու ակնկալիւք: Համերաշխութիւնը պէտք է տիրէ մեր վարչական մարմինն ու ժողովուրդին միջև. հաստատունք ուրեմն այդ համերաշխութիւնը, միապետական արտակիր ու փաստաբեր դրութեան մը փլատակներուն վրայ հիմնելով սահմանադրական վարչութեան մը նոր ու հոյակապ կառոյցը:


Խ.

### Ա. Զ. Գ.


Փիի՛նիկ կը ծախուի.

— Աղեխանդրիա. Եէրիֆ Բաշա փողոց, Անկլօ Էթիբսիէն Իրամատան քով, Տիար Բարսեղ Թէլլալեանի խանութը:

— Գահիրէ. Ապտիւլ Աղիզ փողոց, Տիար Կարապետ Երզնկացեանի խանութը:



### Մ Ա Ր Գ Ա Կ Ե Ր Պ Ը



Հ ուրիներու ծրդիներուն մէջ ոսկի,  
 Պառկած պրդերգ Դահնապետք հայ ազգի,  
 Արիւնքաքաղ ցոկով՝ մարմար ծիծերուն  
 Կը հոսուրսայ վարդ-յասմիկը, կէս արբուն։

Ա րինի Դենն է, Երկարգի քառուած խոր,  
 Կ'ասէ դրսի ամեն աղմուկ ու ժրխոր.  
 Ալիքներէն Վոսփորի ստէպ կը նեղուի,  
 Կը ցրնցէ զինք սրկար բրզգիւնն ալ մեղուի։


Մ եռելներու փոսէն փախած մի հիւաղ,  
 Կը պոքոքի Երկրիս Երես. անսրւաղ  
 Գազանի մը պէս իր զոհին հետամուտ,  
 Կը յարձակի, ցերեկ ըլլայ կամ թէ մութ։

Ի ր կրոնակը սրած անեղ Տեսնոնին՝  
 Կը ծաղրէ ողջ Երուպան. իր ոսանին  
 Անայացումը կը դիտէ սառն աչքով,  
 Լրեսներու բանակ մ'ունի միտք իր քով։

Տ Էրուսեան ի՛ր ձեռքով փորեց զերեզման,  
 Հա՛յն է Հա՛յր՝ զերեզմանին պահապան.  
 Ապրէ՛ քիչ մ'ալ, ո՛վ մարդակերպ, մինչեւ որ,  
 Ազգ մ'արիւնի ծովէն յառնէ փառաւոր։

19 Յունիս 1901

Ս. ԲԻԻՐՍ




### ՔՆՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻԻՆ

ԱՐՇԱԿ Բ. Ի ԵՒ ԱՆՈՐ ՊԱՊ ՈՐԳԻՈՅՆ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻԻՆ

ՈՂՐԱՑԵԱԼ ԳՐԱԳԷՏ ԵՂԻՍՋԱՐ ՄՈՒՐԱՏԵԱՆԻ



Լոյս տեսած է Հայկ. Տպարան  
 «Արախ»ի տպագրութեամբ, Աղգային  
 Պատմութեան վրայ նոր լոյս մը սփռող  
 ու խիստ շահեկան պարունակութեամբ  
 սոյն գիրքը։

Գին 2 1/2 ֆր. փոստի ծախքով

Գնել փափագողք կրնան գիմել  
 հետեւեալ հասցէին.

Imprimerie Arménienne L'«Arax»

ALEXANDRIE

EGYPTE



Տեղոյ անձկութեան պատճառաւ  
 յաջորդ թիւով պիտի հրատարակուի Պ.  
 Լ. Ա. ի Բարիզի Union Chretienneի յոգ-  
 ուածը, նաև Գահիրէի մեր մասնաւոր  
 թղթակցին նամակը։

### Մ Ա Ն Ո Ւ Շ Ա Կ Ը

(Վերամաներեն)

Մանուշակ մը կար մարգին վրան,  
կոնարհագին եւ մեկաւոր,  
Մանուշակ մ'եր ան եղիական.  
'Հա' հովուուհի մը մասադ գար,  
Միծաղագնաց խնդաւոր,  
Երգ 'ի շրթունս նա ընթանար:

«Ո՛հ,» մանուշակն ըսաւ. «Մաղիկ  
«Աւեկագեղ քե ըլլայի,  
«Ա՛խ, մանուշակ մը միայն հեգ...»  
Միկնել գայ գիս փողի կոշակ ան,  
Եւ սայ հեգիկ հաւերոյր ինծի...  
Այն ի՛նչ հեշտակն է քերկրական:

Ափսո՛ս, ափսո՛ս, եկար կոյսը,  
Ու մանուշակն ըսաւ անեսս,  
Կոխոսե՛ց հեգ մանուշակը:  
Ինկար, մեռաւ նա, դեռ խնդար,  
«Արդ քե մեռնիմ, գեթ մեռնիմ ես,  
«Նորա՛ ոսքը, նորա՛ հաւար...»

Թարգմ. ԿԵՕԹԷ  
Ա. Ե. Մ.

### Ք Ր Ո Ն Ի Կ

### Ա.ԶԳԱՅԻՆ

— Եգիպտոսի Առաջնորդ Գեր. Տ. Յովսէփ Սրբազան Այվազեան ամսայս 15 ին շաբաթ իրիկուան ճեպընթացով ժամանեց քաղաքս, ուր պիտի անցընէ ամառնային եղանակը:

Լաւատեղեակ նկատուած շրջանակներու մէջ կ'ապահովէին թէ Գեր. Առաջնորդ Սրբազանին Աղեքսանդրիա գալը կապ ունի թաղական ընտրութեանց հետ: Սակայն այդ զրոյցը բոլորովին անհիմն է:

— Քաղաքիս մեծամունն հայ վաճառականներէն Տիար Միհրան Գալֆաեան որ ժամանակէ մ'ի վեր գործով Եւրոպա կը գտնուէր, այս շաբթու քաղաքս վերադարձաւ:

— ՆՈՐ ԶԱՐԴԵՐ. — «Բոս Արմենիան Գոնեսթոնսանս Բոլիթիի հեռագրէ մը առած կը գրէ. «Մուշի Բերդակ գիւ-

ղին բնակիչներուն ու թուրք զօրքերուն միջև արիւնահեղ հանդիպում մը տեղի ունեցաւ: Զօրքերն ու Գուրգերը գեղը պաշարած էին, իբր թէ հոն հայ յեղափոխականներ փնտռելու համար: Թուրք կառավարութիւնը կ'ըսէ թէ՛ ասոնք գիշերանց կրցեր են փախչիլ: Նոյն կառավարութիւնն է ըսողը թէ՛ Գուրգերը գիւղը տուած են աւարի, սպաննած են 3 Հայեր ու վիրաւորած ուրիշ 8 գիւղացիներ: Սրբազանք, Հելենք, Խաստուր, Շուշնամերկ, Սիրնադ գիւղերէն յետոյ՝ այս գիւղն է որ կը քանդուի ո՛վ գիտէ քանի՛ հարիւր զոհեր տալով:

Միջամտելու համար դեռ պիտի սպասուի որ բոլոր Հայերը շարգուի՞ն:

Ա՛լ ատենն է որ Եւրոպան ջախջախէ կարմիր Գազանը:

— Սասուն եւ Զեյթուն բանաստեղծութեանց հեղինակը ծերունին Սիմէօն Յէլէկեան իջաւ այս շաբաթ Գահիրէէն, և քանի մ'օր քաղաքս պիտի մնայ: Համակրելի բանաստեղծին այդ գիրքը, հայրենաշունչ կտորներ կը պարունակէ, որոնք կը յիշեցնեն հին երջանիկ օրերն ու կը վերարժարեն շարգերուն քրտալմնելի յիշատակը: Իրեն նուիրուած այդ գրքին առթիւ, Պատկ. Հ. Աւետեղ Ալիշան նամակ մը գրելով յարգելի հեղինակին, մեծապէս գնահատած է զայն, մանաւանդ «Բրիտոսս յարեաւ» բանաստեղծութիւնը, որուն համար կը գրէ. «Ն'չ միայն հաճեցայ, այլ և հաւնեցայ: Թէ ինչու հաշտեցաք քեզ սրգաւորի երիտասարդ, այլոյ՞ ու աւիւնոտ բանաստեղծին քնարը, թէ եւ ծերուկ, միշտ իրեն յատուկ թրթռումն ու թռիչքը պահած է Սասուն եւ Զեյթունի մէջ, որ ամէն զգայուն Հայու գրողարանը զարգարելու արժանի մատեան մ'է, մեր վերջին մեծ աղէտներուն կէնդանի պատկերացումը:

— Գոնեսթոնս Բ. պրակն ալ ստացանք, հրահանգիչ ու հատընտիր ծաղկաքաղ մը բոլոր Հայ ու օտար հանճարներու գրական արտագրութեանց բուրաստանէն: հաւաքողն է Տիար Ար-

սէն Զարեհեան, ծանօթ գրողը, որ իր այս երկասիրութեամբ ո՛չ նուազ օգտակար ծառայութիւն մ'ըրած կ'ըլլայ մեր ժողովուրդին, մանաւանդ այս տխուր շրջանին մէջ, ուր աւելի քան երբէք պէտքը կայ կեանքի փորձառութեան ու կազմուրոյ խրատներու: Անհամբեր կ'սպասենք յաջորդ պրակներուն:

— Հանրագրութիւնը. Ատենէ մը 'ի վեր հանրագրութիւն մը կը պտըտցնեն, Գեր. Տ. Յովսէփ եպ. Այվազեանի ուղղեալ ստորագրութիւններն արդէն անցած են 160ը. և թերևս քիչ ատենէն հասնին քանի մը հարիւրներու: Այդ հանրագրութիւնը տեսած ըլլալով կրնանք պարունակութիւնն ամփոփել սա բառերով:

«Սրբազան Առաջնորդն ընդունելով ազգային կրօնային իշխանութեան իբր գլուխ, կը խնդրուի իրմէ ժամ առաջ գործադրել տալ նաև հոս, Աղեքսանդրիա, Ազգ. Սահմ. օրէնքները. որոնց անգործադրելի մնալուն հետեանքն է իրերու արդի կացութիւնը. ազգային կենսական կարգ մը շահերը փրկելու համար կը թախանձուի Ս. Առաջնորդէն որ իր հեղինակութեամբ վերջ մը գնէ այս ողբալի գրութեան, եւն»:

Այս քանի մը բառերը բաւական պերճախօս են արդէն, տեղական ազգային գործերուն վրայ ճշգրիտ ու յըստակ գաղափար մը տալու չափ, ու այդ հանրագրութիւնն ստորագրողները մատերնին վէրքին վրայ դրած՝ իրենց այդ պահանջումներով կ'ապացուցանեն իրենց կատարեալ դիտակցութիւնը տեղական ազգային գործերու իրականութեան: Մաղթելի է որ Սրբազան Առաջնորդնիս. մինչև հիմայ քիչ թէ շատ կատարած ուսումնասիրութիւններովը համոզուած, եւ այսպիսի բացառիկ վարչական գրութիւնէ մը ծագելիք ազգային կանխաւ խրատուած, անյայտազ ու բաղձացեալ հետեանք մը տայ սոյն հաւաքական դիմումին, որ տեղի կունենայ ո՛չ նուազ պատկառելի թուով ու կարևոր ազգայնոց կողմէն:

## Ա Ր Տ Ա Ք Ի Ն

— Զրոյց կը շրջի — նոյն իսկ պատմական շրջանակներու մէջ — թէ Պուլկար կառավարութիւնը Պուրկալի նաւահանգիստը Ռուսիոյ ձգած է, յիսուն տարուան համար. . . . : Ասոր փոփարէն, պիտի երաշխաւորէ ութսուն միլիոն Փր. ի փոխառութիւն մը:

— Վէյերնա Բօշթաի բաժնի համեմատ՝ Ռուսիոյ նպատակն է Պուրկալն առնելով իր քաղաքական ծրագիրներն իրագործել Արևելքի մէջ. այս նաւահանգիստը որ ռազմագիտական տեսակետով մեծ կարևորութիւն ունի, անոր խաղերը պիտի դիւրացնէր թէ՛ ցամաքի և թէ՛ ծովու վրայ:

Այսպէս Պոլսոյ կը սպառնայ, քանի որ Պուրկալ 6 ժամէն աւելի հեռու է Վոսփորէն: Արդէն տարի մը կայ որ Պուրկալը Ռուսիոյ ձգուելու խնդիրը յուզուած էր. սակայն Սթամպուլօֆի նախարարութիւնը, որ ռուսատեաց էր, ինչպէս յայտնի է, բացարձակապէս մերժած էր Ս. Բէթէրզպուրկէն եղած առաջարկները:

— Զինօվիեյ Ռուսական դեսպանը, դիմումներ ըրած է Բարձր. Իրան պահանջելով որ վերջերս իբր յեղափոխական ձերբակալուած Պուլկարներն աղատ արձակուին:

— Կրէսէի ըլլոր հիւպատոսները մասնաւոր հրամաններ ստացած են իրենց կառավարութեանէն երբէք չ'ընդունիլ կրէտական խորհրդարանէն աղերսագիր կամ սրտում, որ կը վերաբերի կրէտէն Յունաստանի կցելու:

— Սեյալիկէն կը դրեն թէ Դաւիթովիչ անուն Աւստրիացի մը, որ լեռները կը ճամբորդէր, բռնուած է Ալբանացի հրոսխմբէ. մը, որ խոշոր փրկանք կը պահանջէ:

— Բերքապուրկի Չինական դեսպանատունը կը հէրքէ Չինու կայսեր եւրոպա ճամբորդելու մասին տարաձայնուած լուրը, զոր քանի մը թերթեր հրատարակած էին վերջերս:

— Պելլիւստի հեռագիր մը կըսէ թէ՛

Նիքոլա Բ. Չարը պաշտօնապէս Բեթրսպուրկ հրաւիրած է Սերպիոյ թագաւորն ու թագուհին, սերպ արքայական տոհմին ու ժողովուրդին հրապարակաւ յայտնելու համար իր անյեղլի բարի կամեցողութիւնը:

— Մօնթէնէկրօ. Ռուս հրապարակագիր Անփիթէագրօֆ, Պալզաններու մէջ իր քննական պտոյտը շարունակելով կանգ առած է Չէթինէէ, ուր Նիքոլա իշխանէն ունկնդրութիւն մ'ընդունած է: Իշխանը՝ ցամաքակղզին շահագրգռուող գլխաւոր խնդիրներուն վրայ խօսակցութիւն մը բացած է. ահա՛ իշխանին քանի մը յայտարարութիւնները. «Կը սիրեմ Սերպիոյ Աղեքսանդր թագաւորը, գերազնիւ երիտասարդ մ'է: Իր հօրմէն, անկեղծ խօսելով, երբէք չ'էի սխորժեր: Եսամոլ մ'էր անի, ու ազգային զգացումի նշոյլ մ'իսկ չ'ունէր: Աղեքսանդր ունի շատ բարի ու ազնիւ յատկութիւններ: Երբ Մօնթէնէկրօ եկաւ, ամենէն ալ սիրուեցաւ. լաւագոյն բազմանքներս իրեն համար են»:

«Պուլկարիան քիչ մը հեռուները գնաց մակեդոնական շարժումներուն մէջ. բայց քանի որ Ռուսիան ս'իսած է հիմայ վախնալ պուլկարական ապստամբութեան մը պայթումէն՝ ի Մակեդոնիա, շուտով պիտի զսպուին խռովութիւններն այդ կէտին վրայ: Մօնթէնէկրօն այս պահուս աչնչափ շատ զբաղած է ներքին գործերով որ չը կրնար խորհիլ ինքզինք դրսերը նետելու»:

«Ռուսիան ամեն բան է մեզի Սլաւներուս, գլխաւորապէս Մօնթէնէկրօյի համար, որ Ռուսիոյ զաւակն է ու անոր յաւիտենապէս երախտագէտ պիտի մնայ: Ռուսիան է միակ ուժը, որ սլաւականութեան ապագային վրայ հաւատք ունի. իրմէ զատուող Սլաւներուն սորքերուն տակ՝ դետինը կը փախչի. կը կորսնցնեն անոնք իրենց ազգայնութիւնն ու մտատիպարը: Սթամ-

բայ մը բռնելը, որուն մէջ գտաւ անի իր կորուստը:

— Սուրբանը սպաննած է վերջերս թուրք բժիշկ Նէճիպ պէյը, շուփի գործողութեան մ'ատեն, վախնալով որ այս վերջինն իր կեանքին դէմ չ'դաւաճանէ: Միւս կողմէ ալ կ'ըսեն թէ՛ Նէճիպ պէյ իրօք մտադրած էր սպաննելու Սուլթանը, բայց սովորական բժիշկը նոյն ժամուն վրայ հասած ու Նէճիպը սպաննած է:

— Նէմենի ցեղապետները հետզհետէ ընդհանուր ապստամբութեան երկիւղներ կ'ազդեն. Սուլթանը շատ յուզուած է վերջին լուրերէն և մինչև իսկ դիմում ըրեր է Անգլիոյ, այդ շարժումը կեցնելու համար:

— Թանի մէջ կը կարդանք. Կ. Պուսէն հեռագիր մը կը հազորդէ Յունաց նախկին պատրիարք Յովակիմ Գ. ի վերջնորութեան լուրը. նոր պատրիարքը 67 տարեկան է. առաջին անգամ պատրիարքական դահն ելաւ 1878 Հոկտեմբերին երբ 44 տարեկան էր դեռ: Վեց տարի ետք, 1884 Մարտին, ստիպուեցաւ հրաժարիլ: Վերակազմել ուզած էր կղերականութիւնն, ինչ որ իրեն դէմ վայրացուց եպիսկոպոսները. այդ վայրկենէն ա'յնպիսի ուժգին ընդդիմութիւն մը գտաւ իրեն դէմ ու ա'յնպիսի ատելութիւն մը, որ պարտաւորեցաւ քաշուիլ: Այս ընդդիմութիւնն քաշաւերուած էր յունական կառավարութենէն, որ իրաւ կամ անիրաւ, կը նկատէր զՅովակիմ իբր գործիք մը կամ բարեկամ մը Ռուսիոյ: Իսկ սա, իբրև օրթոտոքս Մեծ տէրութիւն, իրեն նպատակակէտ ըրած է, միշտ գերիշխանութիւն ընել Յէնէրի Պատրիարքարանին վրայ: Այն ատեն Մեծ-Եպարքոսը Քիւչիւկ Սայիտ բաշան էր, որ մեծապէս նպաստաւորեց Յովակիմի քաշուիլը: Ժամանակ մը վերջ Սայիտ բաշան ըսած կ'ըլլայ թէ՛ իր եպարքոսութեան ատեն իր գործած սխալներուն մեծագոյնն եղած է Յովակիմի

ասհմանուած վայրը: Այդ ատենէն 'ի վեր, ամեն անգամ ոչ Գահը թափուր մնար, Ընտրողական ժողովին աշխարհական անդամներն ընտրելեաց ցանկին մէջ Յովակիմի անունը կը գնէին, անարժէք եպիսկոպոսաց անուններուն քով, ստիպելու համար եկեղեցականութիւնն որ իր ընտրութիւնը կայացնէր Յովակիմի վրայ. բայց, ամեն անգամ ընտրութեան վերջին ձևակերպութիւններն անօրինող եպիսկոպոսներն աւելի նախընտրած են քուէնին տալ յարգէ մարդու մը որ իրենց ձեռքը խալալիք մը պիտի ըլլար, քան թէ վերընտրել անի զոր գիտէին թէ իրենց պետն է և զոր յանիրաւի կ'ամբաստանէին զիջումներ ըրած ըլլալու Բ. Իրան, 'ի վրաս Սուհամէտ Փաթիհի կողմէն եկեղեցիին շնորհուած առանձնաշնորհմանց ու նախապատուութեանց: Այսպէս է որ 1884 ին Յովակիմի քաջուելէն 'ի վեր, քահանայապետական Գահը նստաւ Յովակիմ Գ. ապիկար մարդ մը, որ իր ընտրուելէն մէկ տարի ետք մեռաւ. Ինոնէսիոս, տկար ու անազդեցիկ. Նէոփիզ, ապիկար մէկը. Անթիմոս, կատարեալ ոչինչ մը, և, վերջապէս, Կոստանդին, խելացի, ուսեալ բայց նկարագրով տկար մարդ մը, որ Սինոդի քանի մ'անգամոց ձեռքին մէջ խաղալիք դարձաւ:

Երբ որ անցած տարի իշխան Մավրոզորտադօ, Կ. Պոլսոյ յունական դեսպանը գնաց Աթոս լեռան այցելութեան, Յովակիմի հետ ունեցաւ երկայն խօսակցութիւն մը, որ նախկին պատրիարքին իրական զգացմանց վրայ ամեն կասկած փայտաց. և այն ատենէն 'ի վեր սա եղաւ ոչ միայն Ռուսիոյ, այլ և Յունաստանի ընտրելին: Ահա սոյն կրկնակի նեցուկին կը սարտի իր աշօրուան վերընտրութիւնը: Սուլթանը կ'ուզէր անշուշտ անի մերժել, բայց կը թուի թէ չէ՛ համարձակեր ընել այդ բանը, Ազգին միահամուռ բաղձանքին առջև:

Յովակիմ Գ. ի կը պարտի ազգը Ֆէնէրի մեծ վարժարանին ստեղծումն ու իր պատրիարքութեան օրո՞վն է որ 'ի Մակեդոնիա յունական հարցը պիտի դիտին շահի. խիստ մեծ ազատական կրթութիւն մ'առած եկեղեցական մ'է, հաստատամիտ, քծնումներու թշնամի, և իր ուզածը լաւ գիտցող: Եթէ այս դարու վերջին քառորդին իրեն պէս մարդիկ վարէին եկեղեցին, Ֆէնէր չը պիտի տեսած ըլլար քիչ քիչ կոտորին այն ազդեցութեան, զոր ամեն ատեն 'ի դորժ գրած է Թուրքիոյ մէջ:

**Տ Ե Ղ Ա Կ Ա Ն**

— Սյարիև բաշան, Սուտանի նահանգները զրկուած Բրիտանական պատուիրակը, իր ծննդավայր Աւստրիա նահակ մը դրած է ըսելով թէ՛ տարիէ մ'ի վեր որ Լնդհ. Բննիչի պաշածնը կը վարէ ինք, շատ խոչնդոսներու հանդիպած է, բայց յաջողութեամբ գլուխ հանած է Տարֆուրի Ալիին հետ իր ունեցած բանակցութիւնը. այցելած է Կէզիրըն, Կէտարէֆ, Կալապաթ, Բասալա և Սուաքիմ: Կարմիր ծովուն վրայ մաղմնացեր է որ խեղդուի, Ուինկէթ զորապետին պզտիկ շողենաւին արկածին մէջ: Այս ամիս Խարզում կը մնայ, յետոյ միտք ունի Փաշտա ու Սուլթան այցելելու Կապոյտ նեղոսին վրայ: Ստոյգ չէ այն զրոյցը թէ՛ Սենուսինը ու մեծ շեխն ու մահտին բոլոր մահմետականաց ընդհ. ապստամբութիւն մը կը պատրաստէ: Մեծ յոյս կայ որ խաղաղութիւնը պիտի պահպանուի բրիտանական Սուտանին մէջ: Սլաթին կ'ըսէ որ ինք Յուլիսին Վիէննա պիտի երթայ արձակուրդով:

— Ժակսահիսը հետզհետէ կը ճարակի եգիպտոսի ներսերը: Զակազիկ ու Մինիյէ, վերջին օրերուն մէջ մանաւանդ, յաճախեցին շատ մը դէպքեր. առողջական կացութիւնն երկիւղալի կը դառնայ: Կառավարութիւնն ազգու միջոցներ ձեռք առած է: